


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHEALOUYCE

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՏԻՆԵ

ԵՐԵՎԱՆ

Տարեկան գր. ողջ 30

ԱՐՏԱՍՄԱՆ

Տարեկան գրանգ 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍ ԿԵՐՈՒ փոխարէն վճարումէ զեք պիտի ըլլան .

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չե՛ն տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ :

Բարձրագոյն Երեւանի Գործարարական Կոնցրէսի Պատմական Երկրագործական Կոմիտէի Կարգադրութիւն

ԳԵՐՈՐԻ ՓՈՓՈՋԵՆԱՆ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շ Ա Բ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Թ

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊՕՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց հարձակումը պիտի իրար դիմադրուի, որ կ'ընդունուի Մասնաւոր Կոմիտէի կողմէն :

Հ Ե Ր Տ Ա Ր Ա Վ ՈՒ Ի Շ Ա Ր Ա Ք Օ Ր Ե Ր Ը

Յօդուածագիրները ուղղակի պատասխան տու ինչ ինչեց զգածներու

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂՁ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ո Ր Ի Չ Ո Ն

ԱՅԺՄԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորութիւններն ու նորագոյնութիւնները չեն որ կը պակասին Հայ կեանքին մէջ, Դեպի յազմանա՛կ... բեղմնաւոր տարեշրջան մը բուրբութիւններով նոր մըն ալ կ'սկսի աճա՛ն :

Հայուն ճակատագիրը վարել ցանկացող կուսակցութիւններուն մէջ իրենց վերապահեալ պատճառներով պառակտումներու եւ միացումներու երկուսուցումներու հանդիսատէսը եղան մեզմէ շատերը :

«Արշալոյս» ասոնցմէ շատ քիչ տեղեկութիւն ունի . այնչափ միայն, որչափ որ կոչուի եւ վերակոչումներու հրապարակ դրուած մասերը թող կուտան իրեն : Իսկ հիմակուան իրեն զբաղելու քանակը այնչափի մը մէջ կը կայանայ ուրեմն որ՝ իբր օրուան Հայկական քաղաքականութեան կարեւոր անցքերն ու փոփոխութիւնները արձանագրած ըլլալու թերութիւնը դորձած չ'ըլլայ :

Մտաւոր անցեալի կը վերաբերի «Մուրադ» ի Երեւանու աշխարհային Բնագիտութիւնը, պէտք է խոստովանել, իրեն մասին շատ նպաստաւոր վկայութիւն մը ընելու կը թելադրէ զմեզ :

Չենք գիտեր թէ՛ այդ պատուարձան այցելուն, եթէ քանի մը ամիս յետագէր իր ուղևորութիւնը աստի, իրեն համակրողներուն թիւը եւ արտայայտուած համակրանոց չափը կարեւոր փոփոխութիւններ պիտի կրէ՞ր :

Այս տարակիցը յայտնելով՝ բնականաբար «Մուրադ» ապացուցեալ անձնութիւնները եւ ամէն կողմէ վեր ազգասիրութիւնը վիճելի ցոյց տալու դիտաւորութիւնը չունինք, այլ Երեւանու հայուն տեսակ մը նորասիրութիւնն է որ աչքի առջև ունենալ կուզենք : Մուրադ, իր կոչումին հաւատարիմ զինուորը կը մնայ Միութիւնն ու համերայնութիւնը իր նշանաբանն էր, եւ իր քաղաքացիներէն մէջ չի՛ շեղեցաւ բնաւ :

միւսնոյն կրկնելէ, իսկ արդիւնքը՝ եթէ ապագան ո՛ր է հերքում չ'տայ, կատարուած իրողութիւններուն երեւոյթներէն դատելով պիտի կրնանք ըսել թէ՛ նպատատար կայանք մը գտած է :

«Մուրադ» ծրագրական յիշատակ մ'ալ կը թողու շին եւ վերակալեալ Հնչակեան Կուսակցութեանց համերայնութեանը գործին տեսակէտով : Մայիսի 15-ը որ շուտով սրբաբարձութեան հաշտութիւն մէջ չ'գրուի այն, եթէ անոր իրականացումը օգտակար համարուած է դատելու կարող ձեռնհաս ու փորձառու անձերու կողմէ :

Ասոնք յետագաներն են . Ա. Երկու կուսակցութեանց մտաւոր ծրագրին նոյնութիւնը՝ որ է ազգային անկախութիւն :

Բ. Նոյնութիւն կազմակերպական սիսթէմի, այսինքն կեդրոնացում :

Գ. Գործելակերպի նոյնութիւն, այսինքն պատրաստութիւն ընդհանուր ապստամբութեան եւ մերժում ցուցական դորձուցումներ :

Այսպիսի բազմապահանջ ծրագրի մը առջև վայրկեանական ո՛ր է խորհրդածութիւն արդիւնաւոր ըլլալէ հեռի կը մնայ . պէտք է որ վերապահումները ունենանք :

Այժմէականութիւն ունեցող կարեւոր դէպքերէն մին ալ Գաշտակցութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւններն են, որոնց մասին ալ անտարբեր մնալը ներքին չ'պիտի ըլլար :

Բրօ - Արմենիաի Յունութիւնը բաւական ընդարձակ ծանօթութիւններ կուտայ այդ մասին, բայց քանի որ ոմանք փորձի համար եղած կարգադրութիւն մը կը նկատեն այդ որոշումներն, մեզի համար ալ առ այժմ անոր փրկարար արդիւնքները տեսնելու սպասելն է խոհեմութիւնը :

Այսու ամենայնիւ առիթը երբ ներկայանայ, մեր խոսքն ձայնն ալ կրնանք խառնել զգուշաւոր լաւատեսներու յայտնել ուղած խորհրդածութիւններուն հետ :

Բ.

ԵՐԵՎԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Լոնտոնէն Յունուար 31 թուականաւ քաջուած հեռագիր մը հետեւեալ տեղեկութիւնները կը բերէ մեզի, Երեւանու ներքին խնդիրներու նկատմամբ :

Մր. Ռօպէրթսըն՝ Երեւանու կառավարական ձեւին մէջ բարեփոխում մը մտցնելու գիտումով սահմանադրութեան հաստատումը կը առաջարկէ խորհրդարանին : «Եթէ կ'ըսէ, Լոյս Գրոմբրի վարչութիւնը նիւթայէս օգտակար եղաւ այս երկրին, սակայն բարոյսպէս սպասուած արդիւնքը չ'կցուի ձեռք բերուիլ »

Սըր Էտուարդ Կրէյ պատասխանելով անոր՝ ըսաւ որ, «պէտք է այլ ևս վերջ մը դնել այս յարոնորդ առաջարկութիւններուն, որոնք Երեւանու պաշտօնատարները շուրջանցելու բնոյթը ունին : Եթէ այսպէս շարունակուի՝ յարեց, իր արժանապատուութեան նախանձախնդիր եւ ո՛չ մէկը պիտի գտնուի, որ ուղէ՛ Երեւանու նախկին կառավարութիւնները այդ ցեղին բոլոր էական յատկութիւնները փճացուցած են, այնպէս որ արդի ժողովուրդը տակաւին ընդունակ չէ կարեւոր փոփոխութեանց յարմարելու : Եթէ վարչային նոր դրութիւնները շատ կանուխէն կերարկուէին, իբր արդիւնք ուրիշ բան առաջ չ'պիտի դար, բայց եթէ կաշառակերութիւն, խառնաշփոթութիւն, անկարգութիւն եւ հարստահարութիւն մը կը լարուի կատարեալ փոտահութիւն կը ներշնչէ թէ՛ Լոյս Գրոմբրի եւ կառավարութեան տաճած յոյսերը պիտի կրնայ արդարացնել : Պէտք է անոր լայն ժամանակ տալ, որպէսզի ազատորէն եւ առանց Անգլիայէն ստացած հրահանգներուն ազդեցութեան ներքեւ իյնալու, ամէն բանի վրայ լաւ գաղափար մը կազմել կարենայ :

Բարեկարգութիւնները վարէն սկսելու է. Նախ թաղապետութեանց գաւառային վարչութիւններու իրաւանց սահմանները ճշգրտու է. ու յետոյ՝ գաստիարակութեան գործը ներկայանալի յառաջիմութեան մը մէջ զննելու համար ժամանակի կը

կարօտինք : Այսու ամենայնիւ, Անգլիոյ արքայական կառավարութիւնն ալ պէտք է որ իր ազդեցութիւնը իդորձ դնէ, Երեւանու ապահովելու համար վարչային ա՛յնպիսի կազմակերպութիւն մը, որ հիմնուած ըլլայ արդարութեան եւ փոխադարձ համակրանոց վրայ :

Այս նկատողութիւններէն յետոյ «Լարուարու» առաջարկը մերժուցաւ :

ԲՐԻՁ ԿԱՅ ...

Նիւթական տազնապը թեթեւացնելու, կամ լաւ է ըսել՝ բառնալու համար մեր նախորդ թուով հաւանական տեսնուած յոյսերը գրեթէ բոլորովին անհետանք կը մնան, կառավարութեան բացասական պատասխանին վրայ ա՛յն յուսաբեր դիմումին՝ որ տեղույս մէջ անուն չի նաճ մէկ քանի առևտրականներու կողմէ պիտի ըլլար Երեւանու նախարարութեան խորհրդականին մօտ :

Առևտրականներուն որոշումին ամփոփումը հետեւեալն էր :

Ասոնք՝ նիւթական օժանդակութեան անհրաժեշտ պէտքին առջև՝ ծրագրած էին Երեւանու նախարարութեան խորհրդական Պ. Հարվէյին դիմելով պահանջել որ կառավարութիւնը երկու միլիոն ոսկի տրամադրէ Գրեյի Թոմսոնի դրամատան, որպէս զի այդ դուրմարով օգնութեան հասնի տիրող տազնապէն վրաւորներուն, եւ անմիջական պէտք ունեցողներուն, այնպէս որ առաջիկայ տարւոյ մշակութիւններն ալ տազնապին ազդեցութեանը տակ նուազութեան արտաէն չ'վարակուին :

Այսպիսի դիմումի մը ծրագիրը թէպէտև ոմանց կողմէ ծափահարուեցաւ, սակայն հաշիւի առնուած չէր Երեւանու նախարարութեան վարիչներու պատրաստած ինչ ինչ հաշիւներն ու առարկութիւնները :

Այսօր որովհետև ժխտական պատասխանի մը հանդէպ կը գըտնուին դիմումը ծրագրողները, այլ ևս հարկ անհրաժեշտ դարձած է տեղական թերթերուն սիւնակները գը-

բաւել, ուրիշ ճար ճարակ մը ընելու համար տիրող տաղանային:

Ըսինք թէ հաշի աւնուած չէր վարչական մարմնոց պատասխանաձեղիտողութիւններն, որոնք ամիսներու աքնութեան արդիւնք ծրարիր մը մէկ հարուածով կ'ոչնչացնէին:

« Եթէ կառավարութիւնը, կ'ըսեն, երկու միլիոն ոսկին տրամադրէ Բրէտի ֆոնտիէ դրամատունին, անկէ գլխաւորապէս օգտուողները որոնք պիտի կրնան ըլլալ: Ուրիշ կերպ այդպիսի օժանդակ գումար մը տրամադրուելով՝ Եգիպտոսի դաւնազան ազգութեանց պատկանող անհասաներուն ինչ չափով օգտակար պիտի ըլլայ: Ի՞նչ ապաքէն տիրող նիւթական տաղանային ընդհանուր բնակչութիւնն է որ կը առած է գըրեթէ առանց բացառութեան: »

Առաջին հարցին ի պատասխան՝ կառավարական հարստութիւնները զեկավարող անձեր կը մտածեն թէ՛ կառավարութեան մտտուկէն պահանջուած գումարէն - եթէ տրամադրել ալ ուզէ - առաջին օգտուողները պիտի ըլլան մեծահարուստ կալուածատէրերը, որոնք արդէն հրապարակը իրենց ձեռքին մէջ ունին: Իսկ սակաւաթիւ մեծահարուստներ երկրագործներու կացութիւնը նոյնը պիտի մնայ, ինչ որ էր: Հետեւեալը մշակութիւնը զորայնելու անունին տակ պահանջուած այդ գումարը նոր զարկ մը չ'պիտի կրնայ տալ մշակական գործերով զբաղողներուն հաւասարապէս:

Երկրորդ հարցին գալով, մեծ օգտակարութիւններ մը չեն ուզեր տեսնել միջին և ստորին դասակարգերուն համար, դրամատէրերը պահանջուած երկու միլիոններէն, ուստի բանաւոր չի համարուել կառավարութեանէն երկու միլիոն բոլորելու համար եղած դիմումներն: Ու ստոր կտրուկ ճամբան համարուած է ո՛չ կարծւորը:

Նիւթական պակասին խնդիրը քանի որ այս փուլերուն մէջ մտած է բարձր կոչուած շրջանակներուն մէջ, գոնէ մենք խնայողութեան միջոցներուն դիմելով է որ մեր նիւթական անձկութիւնները պիտի կրնանք չափաւորել: Մեզի համար մտածելու լաւագոյն ուղղութիւնը մեր ուշադրութիւնը այդ կողմերը դարձնելն է ուրեմն:

ԿԵԱՆՔԸ ԳԱՀԻՐԻՒՄԷՂ

է.

1896էն ի վեր տեղւոյս ազգային կեանքին մէջ առաջ եկած փոփոխութիւնը զգալի է. պարզ բայց իրական, օրինակ մը բաւական է գուրս ցայտեցնելու համար ըստս:

Գաղթականութեան առաջին հոսանքին ազգային գործոց գլուխ կը դրուուէր վարիչ մարմին մը, աչնիւ բարի անձեր բոլորն ալ եւ նորեկներուն հասնողէ պ բարի տրամադրութիւններով տոգորուած: Բայց այս ժողովը մէկ պահաւորութիւն մը ունէր, իր անդամներուն մեծամասնութիւնը - չ'ըսելու համար ամբողջը - բախտին մէկ հեղուկութեամբ անձանօթ էր ազգային կեանքին,

կեանքի մը՝ որուն գործնքը սակայն կոչուած էր վարելու: Օր մը գաղթականներէն մին մեր հոգեւոյս Հայրապետին վեհափառ Հայրիկի մեծագիր պատկերը ներկայացուց այդ ժողովականներէն միոյն: Ժողովականը ընկերային բաւական կարեւոր գիրքի տէր եւ բարեկիրթ ալ անձնաւորութիւն մը զարմանօք հարցուց թէ ո՞վ կը ներկայացնէր այդ պատկերը. « Հայոց Հայրապետը » պատասխանեցաւ:

« Ի՞նչ է պաշտօնը. »
« Ազգային Եկեղեցոյ պետն է, աւելցուց գաղթականը:

« Ուր է Աթոռը այդ Պետին: »
« Էջմիածին, Ռուսիոյ մէջ: »

« Զարմանալի՛ բան », մրմնջեց ժողովականը եւ զոն սրտով առնելով այդ պատկերը, իրմէ քիչ հեռին գտնուող ուրիշ ժողովականի մը ներկայացուց զայն, եւ որովհետեւ այդ երկրորդ պարտնը իրմէ աւելի ծանօթ չ'էր ազգային կեանքին, հարկ եղաւ որ մէկ ձեռքէն ստացած անդեկութիւնները միւս ձեռքէն տայ, եւ միաքը ընկերջը լաւ բացատրելու համար՝ աւելցուց, միշտ փերանսերէն լեզուաւ. « Ասի Հայ Եկեղեցոյ Պապն է եղեր: »

Ատկից ի վեր բաւականին փոխուած են իրերը, եւ հակառակ եղած քննադատութեանց, չ'եմ կարծեր որ ազգային կեանքի այս աստիճան անձանօթ ժողովական մը գտնուի ներկային մէջ:

Ի՞նչ է պատճառը որ հոս ազգային գործերու մէջ շատ անգամներ զիրար հասկնալը դժուարին կ'ըլլայ, եթէ ոչ անկարելի:

Եգիպտոսի հայերուն մէջ ունինք ամէն տեսակ նմոյշներ. Պօլսեցիներ եւ Իզմիրցիներ մտա կայ՝ Թուրքիոյ ներսերէն գաղթողները, կաւկասասայ մասաւորականին թով Պարսկաստանին եկողը, կան որ հայրենիքէն ուղղակի հոս եկած են, ուրիշներ Եւրոպայի եւ Ամերիկայի զանազան կեղծոյնները ժամանակ մը ապրած են. ասոնց վրայ պէտք է աւելցնել սեղացի գրեթէ ֆէլլահացած հայր, եւ այս բոլոր հայերը ընդհանուր դաստիարակութեամբ, զարգացումով, խոսնուածքով իրարմէ զգալի կերպով կը տարբերին. այս հայերուն բոլորն ալ իրենց միջավայրին ազդեցութիւնը կը սրած են. ջերմ պահպանողականին թով կայ ծայրահեղ սպասականը, բարձր ներկարարի տէր հայուն մտ շայլօքը, վաշխառուներ, եւ այս բարեկրնին մէջ պէտք է զարմանալ եթէ այս կամ այն ազգային խնդրոյն վրայ հնար չ'ըլլայ հասցողութեան մը յանդիւրը:

Ի՞նչ պէտք է ընել ազգային գոյութեան պահպանման համար:

Շատ պարզ է պատասխանս:
— I. Կանոնաւոր վարժարան մը, որ տեղական պէտքերուն հետ զուգընթացաբար ջամբուի Մայրենի լեզուն եւ ազգային պատմութիւնը:

— II. Կայն հիմերու վրայ կազմակերպուած, Լուսարան - Ընթերցատուն մը եւ Գլխաւոր մը. եւ ասոնք պիտի կատարեն այն գերը չափահասներուն համար, ինչ որ է վարժարանինը զարթոցականներուն համար, կամ թէ տարբեր բանով, մին միւսին շարունակութիւնը ըլլալու է:

— III. Առողջ Մամուլ մը, առողջ իր սկզբունքներովը, եւ այդպիսի մամուլ մը պիտի կարողանայ ազդել ամբոխին վրայ եւ առաջ բերել կշիռ ունեցող հանրային կարծիք մը:

Ահա, ըստ իս, այն երեք գլխաւոր ազգակները որք պիտի կազմակերպեն Եգիպտոսի հայ անհատը եւ պիտի ընեն զինքը օգտակար քաղաքացիներ, օգտա-

կար օրքան այն ցեղին որուն կը պատկանին, նոյնքան այն երկրին որուն ասպնջականութիւնը կը վայելին:

Երբ Ապրիլը կուգայ արեգակը կը սկսի աւելի զգալի ընել իր ներկայութիւնը ջերմաչափը աւելի ջանք մը ունի կոկոզավիղ զէպի վեր բարձրանալու, եւ այս բոլորին արդիւնքը ուրիշ բան չ'ըլլար ալ փութացնել նախ ըզբօսաշրջիկներու եւ յետոյ տեղացի ջերմութեան հետեւը սակից, Մէսաժըրի Մարթիմ, Իտալական, Աւստրիական եւ ուրիշ շոգեկանային ընկերութիւններ կանոնաւոր կը սկսին վաճառել տոմսակները, ուրիշ կերպով հնար չ'է տեղ գտնել ուզուած ժամանակ, շուք կը սկսի պանդուկներէն շատերը գրեթէ կը փակին իրենց դռները, ոչ պարահանդէս կայ եւ ոչ ալ ձիարշաւ: Մայիսի վերջեր արդէն քաղաքը դատարկացած է. երբեմուն փողոցէն անցած միջոցիկ կը հանդիպիս փակ վաճառատուներու որոնց փեղկերուն վրայ փակցուած ազդէն կիւմանաս ամբան եղանակին համար գոցուած ըլլալը:

Ամբան այս անհամբոյր վիճակը հնարաւորութեան սահմանին մէջ բարեկաններու համար շաքաթը երկու անգամ գրեկրները էլզպէթէի պարտէզը կայ զիտուորական նուագ, նոյնպէս Նեղոսի վրայ շոգեկանային պտոյս մինչեւ Ֆոս - Էլ Պահր:

Երբ ասպին 45 աստիճան ջերմութիւնը ամէն ինչ ի փախուստ կը դարձնէ, անդին ֆէլլահ իշպանը - անգրիտակ՝ աշխարհիս անցուգաճին, եւ անտարբեր՝ արեգակն եւ ճառագայթներէն ազդեցութեան - աւաղներուն վերայ փոռած կատարիւր անգործութեամբ կը խոկայ, եւ երբ սիրելի ընթերցող սար կը աւանես, իմացիր թէ Եգիպտոսի մեռեալ եղանակը սկսած է:

ՎԵՐՁ
ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵՅՍ

ԱՐՇԱԼՈՅՍ

Ճեռքէ կը ծախուի Տիար Գրիգոր Տամկահեանի քով ի Պէն Էլ Սուրէն, հասը 20 փարայ ողջի:

ԹԻՓԵՐՈՒ ԵՐԱՆԳԱՊՆԱԿԷՆ

Մ Ի Մ Ո Ս Ը

— 0 —

Ճիշդ կէս օրին ճշգրտան ժամագիրներու բուն նախանձանդրութեամբ, անկկայ Մուսքին խաչածեղ շեղուկ փողոցին բերնէն կերեւայ անսեթեթէ խորտա քալուածքով մը, կուրծքը ցցած ուռուցիկ եւ զսպանակացած բնաւորութեամբ ալ ու ձախ սեղացող արմուկի հրճուակներով շոգեկանի կը ձեռքէ երթեկեկող բազմութիւնը:

Մաղերու անխնամ մացառուտը ցցուած խորիներով, ըմբոստ արշաւող զեղնագոյն պիտերու յարգ ամբողջութեան մը հետ զէմքը կը զարդարեն: Մակուկէն ու ամբօթէն ֆլանէլով պատասխարուած կուրծքէն՝ որուն վրայ հրնամենի ժաղէթը կը թառն թեւաբախ, կուրծքի թառուաքին վերջաւորութիւնները կուր կը պոթկան զանգրացած արձակումներով, դարբու աւանդական կծիկէն ուրուածալած հեղնող աշխարհայնութիւնը յաւերժացնելով:

Պաթիթէ ճերմակ, կապոյտ գծաւոր լայնիկէ տափաթը, զոր ինքը ձեւելու անհուն բազաւորութիւնը ունեցած է, կալեծիփի դիմադրող հովին ամէն մէկ հպուսներուն տակ, տափաղացած ձեւ մը

տալով իր ուղղածից սրունդներուն Անոր վերի մասը որ փողկապուած է հանգոյն պզտիկներու անդրաւարտիկին, ժապաւինածեւ կտուի կրկնակ երեքօթի քալուածքին համեմատութեան չափովը, առկառուած երկու ծայրը՝ ճօճանակաձեւ կը ճախրեն օդին մէջ բողբոջին ազատ իր հրամայող կամքէն: Երբեմն բոկոտն, եւ երբեմն ալ գորշ գուլպայով պաշտպանուած իր ոտքերը՝ կը մխրճին քայլուած կիսակոշիկներու մանրամասնութեան մէջ, արտաքին պատկերին ամբողջացման անհնթեթ վերջաւորութիւն մը պատկերացնելով:

Ճաշասեղաններու ճերմակ սփռոցները կը վէտվէտին հիմայ դուրը՝ բաց օդին տակ անհամբեր, ցորեկուան այցելուներուն: Սպասները իրենց կարգին կանոնաւորուած, լոթի խոնջէնքին պահը կը մրափեն, ամէն ինչ հանդարտ, զիտ ամենօրեայ եռուզեռ՝ իր սովորական տողանցումը չէ՛ փութացուցած: Վերէն անմիջապէս անկիւնէն՝ փողոցին մեռութիւնը վրդովող խուլ չփչիփոց մը կը փրթի դանդաղ համաչափ քալուածքի մը կանոնաւորութեամբ որ կը մօտենայ . . . : Ճաշարանին ու գինեւան յարակցութեամբ յօրինուող անկիւնի սեղանը, իր քառակուսի մը աթոռներով, խուճապի մասնուածի պէս աւրշուկուած երեւոյթ մը կանէ անոր յաճախումէն: Սպասարկուները պատրաստ իր հրամանին կը շարունակեն, որոնց՝ պատգամներ արձակելու պէս, խսպոտ ձայնով իր միաքը լակոնապէս կը բացատրէ:

Օրուան հերոսն է ան հիմայ. կերակուրի պարզ զուարթացող հաճելի մարդ՝ ունկնդրուած ամենէն, կը խօսի, կը հարցասիրէ, սակայն շատ քիչ մտիկ կ'ընէ:

Եգիպտոսի հնագործան եւ մօտաւոր անցեալին պատմութիւնը մանաւանդ՝ զոց գիտէ, ներկայ միջազգային քաղաքական կացութեան վրայ օրը օրին անդեկութիւններ, երբեմն ալ ապապայի զուշակութիւններ կուտայ:

Դիմախելու մեքու չափազանցութեան հետ, խօսքի անհամութիւնը զուզընթաց՝ քրքիչները բազմապատկելու սեղի կուտայ. ճաթեցնելու աստիճան աղբները կը զալարէ ներկաներուն. շատ մը աչքեր կ'արցունքոտին այլանդակուած մարդուն հոպտանքէն, սրկէ նրկէ հարցումներ կը նետուի հեղուկան, ուրոնց լրջօրէն պատասխանելու անհրաժեշտ հարկին տակ արամադրուած իրեւոյթով . . . կը ցափոտէ, բուռնցքի արեակն հարուածներու տակ սեղանը իր սպասներովը զրդացնելով:

Ձանձրոյթի պահն է հիմայ ծայր տուած, զժողովութիւն արտայայտող բաներ կը սպրդին շափաղանցող այդ մարդուն հասցէին, որ կը շարունակէ զեւ իր խօսքի շահատակութիւնները անայլալ: Սեղանակիցները արդուուած զըլուխին աղատելու համար, ժամէ մը ի վեր քակուող անհասնում աս խօսքի շարոցէն, կէս կուշա՛ կամաց կամաց կծիկը գնելու կ'ըստիպուին՝ նոյն ողբաւորութեանը մէջ մինակելով զինքը անգրտակ . . . :

ՆԸԿՍՐ

Չ Ե Կ Ո Ի Յ Ո Ի Մ

Յօդուածագիրներէն յատկապէս կը խնդրուի իրենց դրութիւններուն մէջ յախուուն բացատրութիւններէ զուշանալ եւ պատշաճութեան սահմաններէն չի չեղել, եթէ չեն ուզեր որ իրենց աշխատութեան արդիւնքը լոյս տեսնելու իրաւունքէն չ'զրկուի: ԽՄԲ.

ԱՂԵՔԱՆԳՐԻՅԱՆ

ԼՈՐԵՆՍ

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Աղէքանգրիայէն մեզի լուր կը տրուի թէ՛ Պարսից Վեհ. Շահը Շահաբադի պատուանշանը շնորհած է Վեհմ. Աբրահամ Բաշա Բարթոլի միակ գուստը շնորհափայլ Տիկին Ռոզա Միքայէլ Պէյ Բէիզեանի .

Տիկին Բէիզեան Պէյ ընտիր յատկութիւններով օժտուած է և արժանի Պարսից Վեհափառ Շահին այս բացառիկ շնորհին .

Մեր անկեղծ շնորհատրութիւնները պատուընկալ Տիկինը և իր բուրբ պարագաներուն .

ՆՈՒԱԳԱՆԴԵՍ

Տեղական բոլոր թերթերն ալ գրեթէ առանց բացառութեան ամենամեծ գովեստներով կը խօսին կիւտէնեան նուազահանգէսին վրայ, որ տեղի ունեցած է անցեալ 20րեքշաբթի գիշեր Գոթթիւնի թաղի սրահին մէջ .

Ընտրեալ և խառն բազմութիւն մը ներկայ եղած է նուազահանգէսին և ունկնդիրներէն և ոչ մին ժխտական համոզում մը կրցած է գոյացնել Պ. Կիւտէնեանի կրական արժանիքին վրայ, իսկ Մամուլի ներկայացուցիչները՝ որ թարգման կը հանդիսանան հոս տիրող կարծիքներուն, շատ փայլուն ապագայ մը կը յուսան Պ. Կիւտէնեանի համար .

ՎՏԱՆԳԱԼԻ ԱՐԿԱՄ

Ամսոյ 29 ի 20րեքշաբթի օրը կէս օրէ յետոյ ժամը 5 ի աստենեբը, ի Շարա Գուպրի (Գարօ-էլ-Նիլ) Մանիսալեան վարժարանի աշակերտուհիները փոխադրող կառքերէն միոյն սունակը կը կորսի և կառքին մէջ գտնուողները վար կիյնան թեթեւ վէրքեր ստանալով : Աշակերտուհիներուն ընկերացող Տնտեսուհին ալ միւսներուն հետ վար իյնալով սրունդներէն մին կը վնասուի :

Այս լուրը ժողովուրդ տիւ գէռնի մէջ կարգալով՝ Արշալոյսի Խմբագրութիւնը աւելի մանրամասն և ըստոյգ տեղեկութիւններ առնելու համար Մանիսալեան վարժարանի Տնօրէնուհի Սրբից Սօֆիին դիմած է նամակաւ մը և անկէ ստածուած պատասխանը պիտի հրատարակէ ի հանդարտութեան ծնողաց :

ՆՈՒՆԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Քաղաքի Աղքատախնամ Ընկերութեան Գործադիր Ժողովը նամակաւ մը հետեւեալ նուիրատուութիւններուն հրատարակելը կը խնդրէ .

Սէտնաուի Զարիֆի Նահատ վաճառականական տունը, ինչպէս ամէն տարի, այս տարի ալ բարեհաճած է նուիրել Ընկերութեան 500 զրշ. ողջ :

ՓՈՒՍՆ ԾԱՂԿԵՊԱԿԻ

Տիար Ստեփան Սէմէրճեանի յուղարկութեան տխուր հանգիստին առթիւ, փոխան ծաղիկագոսկի, Տիար Գրիգորի Գալէնտէրեան Աղքատախնամի նուիրած է 20 զրշ. ողջ :

ՄԱՆՈՒՅՈՒՄ

Կը խնդրուի «Արշալոյս» թէ՛ արտասահմանի և թէ՛ եգիպտոսի այն յարգելի բաժանորդներէն, որոնք մինչև 1905 Օգոստոս ամիսը վճարելի հաշիւներ ունին, և որոնց մասնակի դիմումներ ալ եղած են ունայտասխանի մնացած, որ բարեհաճին իրենց վճարումները փութացնել ստորագրելոյս հասցէին :

Կը խնդրուի նաև հոգեւոյ Տէր Աննգ Եպիսկոպոս Շիշմանեանի երկասիրութիւն «Իմ Աքսորի Կեանքը» տիտղոսով հրատարակութենէն ըստացող և տակաւին չ'վճարող ազգայիններէն, որ նոյնպէս իրենց ստացած պրակներուն փոխարժէքը զրկել հաճին ներքոյ գրեալ հասցէով :

Արգէն խոստացուած է այս հրատարակութեան մնացորդին շարունակութեան մասին ծանօթութիւններ տալ հետաքրքիր ազգայնոց, սակայն ցարդ՝ ցաւալի է բնէ՛ հակառակ ստորագրելոյս ըրած գիմումներուն, Աղգ. Առաջնորդարանը՝ որուն տրամագրութեան ներքե կը գտնուի ամէն ինչ — գոյք, քերք, ձեռագիր, թուղթ, թղթակցութիւն ևն, ևն. — բարեհաճած չէ, բացի տպարանական գործիքներէ, յանձնել ինձի և այս իսկ է պատճառ՝ որ տակաւին որոշ բան մը կարելի չը պիտի ըլլայ ըսել այդ մասին :

Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

Հասցէ՝

Mr. E. Toroesian
Le Caire

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Միջերկրականի շատ մը նաւահանգիստները, զլիւստորագէտ, Գարթաթէն, Մալակա, Ճիպրալթար, Ալճէր, Թունուզ և Թանճէր այցելելու համար, Աւստրո-Հունգարական բազմաթիւ պատերազմական նաւերէ բաղկացեալ նաւախումբ մը մօտորս ճամբայ պիտի ելլէ :

Փորթլանտէն առնուած հեռագիր մը՝ երկու ճարտիչներու իբր լրտես ձերբակալուելը կը ծանուցանէ :

Ժիրժանթի անունով կղեր մը և իր ծառան ձերբակալուած են ոճրագործութեան ամբաստանութեամբ : Ծառան քահանային թելադրութեամբ՝ այս վերջնոյն հօրեղբայրը սպաննած է կղեր :

Պ. Կապրիէլ Հանթօ, որ կամպէթթայի խորհրդարանի նախագահութենէն հրաժարուելը ստորագրած գրիչը նոյն պահուն ստացած էր, Պ. Պէրթրանին կ'ընծայէ պատմական այս գրիչը :

Պ. Պէրթրան Պ. Հանթօի գրասենեկին նախկին տնօրէնն էր, իսկ այսօր՝ Արտաքին գործոց նախարարութեան թղթագրահ է : Վերոյիշեալ գրիչը՝ Պ. Լուպէի

հովանաւորութեան տակ մօտ տարիներու Իւնիվէրսիթէ պոզտային վրայ հիշողուած պատմական փոքրիկ թանգարանին համար է :

ՆՈՒՄԱԿԱՏՈՒՓ

Կիզէ. Տ. Հ. Գ. — Շնորհակալութեամբ ստացուած է Ձեր տարեկան բոսնեգրինը, Մեր ձեռնարկը քաջալերելու համար Ձեր ինքնայօժար կամեցողութիւնը աննշան չ'պիտի մնայ մեր քով, թէև կարեւոր դուժարի մը շուրջ չի գտնուի խնդրելու :

Աղէքանգրիա Տ. Լ. Կ. — Ստացանք Ձեր քարղը Մեր ցոյց առած փութկոտութիւնը Գարտուղարին կը պարտիք, Ձեր շնորհակալութեամբ նամակաւ մը անոր կ'ընաք ուղղել և ստանալ փափաքելի պատասխանը :

Գահրէ Տ. Ե. Ճ. — Թերթիս Մատակարարին միջոցաւ Ձեր զրկած մէկ Անգլ. ոսկւոյ դուժարը ստացուած է, Վաւերական ստացականը մէկ երկու օրէն պիտի ստանաք միեւնոյն անձին միջոցաւ :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարից 28 Յունուար. — Խորհրդարանին մէջ Մարտի մասին եղած հարցումներուն պատասխանելով Պ. Բիշոն, ապահովիլ յայտարարութիւններ քրտ թէ՛ կառավարութիւնը Ազնօգիտաւի մէջ կ'նկատու պայմաններէն չ'պիտի շեղի, ինչ որ կ'ապացուցանէ թէ՛ Մարտի խաղաղութիւնը վերստին չ'ուզէ, իսկ միևնչեղ ցարդ եղածները որիչ բան չեն, եթէ ոչ պարզ զգուշական միջոցներ օրսօրէ աճող անկարգութեանց դէմ. Այս մասին եղած զինուորական միջանորոշումները մամանակաւոր շարժումներ են. Կարելի չէ Միւրիչ Համիսի դիմումներն ընդունել :

Պ. Տէյֆասի ճառին գալով, ասեմաքանը հերքեց զայն, յարելով որ՝ օսար սերտութեանց հետ Շրանսոյի բարեկամական յարաբերութիւնները թոյլ չեն տար անոնց կամ ին դէմ շարժելու :

Բարից 28 Յունուար. — Կայսեր ծննդեան սարեքարտին շնորհիւ տրուած հացկերոյթին մէջ Գերմանիոյ դեսպանը զար թէ՛ Գերմանո-Ֆրանսական յարաբերութիւնները օրէ օր աւելի մտերմական կը դառնան, այնպէս որ Պ. Յայիեր եւ իր աւագանին գոն երեւոյթ մը ունին Գերմանական տրոփոցներուն աճումը խաղաղութեան պահպանման ճանքի վրայ :

Պ. Պոյիս 28 Յունուար. — Սիւնպոյզի խնդրոյն նկատմամբ, Գուր կը հերքէ պարսկական հողին բռնաբարում սեղի ունեցած ըլլալը : Մեծն Բրիտանիա եւ Ռուսիա Գրան մօտ անոր դիմումներ քրտ են, միջադիպէ մը զգուշանալու խորհուրդ տալով անոր :

Բարից 28 Յունուար. — Խորհրդարանը 51 ձայնի դէմ 436 ձայնով վստահութեան ֆոն տուած կառավարութեան :

Պերլին 29 Յունուար. — Դեր-

մանական Մամուրը կասարեալ գոհունակութիւն կը յայտնէ Պ. Բիշոնի յայտարարութեանց նկատմամբ :

Լոնսրա 30 Յունուար. — Անգլո-Ռուս համաձայնութեան իբր հետեւաւ՝ Մեծն Բրիտանիոյ պարսկական խնդրոյն միջանորոշիւնը խորհրդարանին համաձայնութեան եկարկուած ասեմ եղած վիճարկութեան պահուն, Լոնս Լանստուն եւ Պ. Պալժուր պարսկացի Անգլ. կառավարութեան այդ ֆայր, առարկելով որ Երլանսայի մէջ անիշխանութիւն կը տեսնուի, եւ թէ այդպիսի կացութեան վերջ մը դիմելու պատճառով զարժած է :

Ս. Բեքերսպուրկ 30 Յունուար. — Մամուրը դժգոհ է Պարոն Ահմադի ճառէն, եւ Աւստրիան կամքատուանէ թէ արեւելեան խնդրոց մէջ երկրի միջոցով մը կը բռնէ :

Լոնսրա 30 Յունուար. — Լորտերո ժողովին մէջ Մակեդոնիոյ խնդրոյն համար Լոնս Ռիքըն քրտ թէ կառավարութիւնը ամեն ջանք պիտի Եր ի գործ դնէ Եւրոպական սերտութեանց միջանորոշիւնը պահպանելու համար : Ա՛յնպիսի հարցերու միջանոց Ե Անգլիան, որոնք կրնան Թուրքիոյ դէմ պատերազմի մը մղել Մեծն Բրիտանիան, որուն կը հետեւի անխուստիելորտէն Եւրոպական ղեկավար պատերազմ մը ինչ որ հաւանական յարեաց ամենեւնի մեծագոյնն է :

Լոնսրա 30 Յունուար. — Բ. Գուր պարսկական խնդրոյն առթիւ Անգլո-Ռուս միջանորոշութեան ի պատասխանի, խոստացած է հետագրաւ ամեն շարժում դադարեցնել :

Գուր հերքում տուած է Սիւնպոյզի ոսնձգութիւններու մասին եղած գրոյցներուն, որովհետեւ Սիւնպոյզը պարսկական սեղիակաւորութիւն կը ձանձնալ ինքն :

Պ. Պոյիս 30 Յունուար. — Սրբէտուրս Կրիչ մեծ սերտութեանց առաջարկած է Մակեդոնիոյ ոսնիկաւորութեան թիւր քաղաքապահել, աւագակաւորութեան գործունէութիւնը յարաւորելու համար : Գուր վերին աստիճան ազդուած է այս առաջարկին հետեւեալներէն, նկատելով որ այսպէսով Եւրոպական ազդեցութիւնը քաղաքակապէ սպիտի տարածուի Մակեդոնիոյ վրայ, այդ պատճառաւ տակաւին գուժարակներ կը պատրաստէ յեղափոխական խումբերը հաշտելու համար :

Նիւ - Եորթ 30 Յունուար. — Լուսիս Ամսթերսալ - Նախօրեաց Պակէ 4,500,000 եւ Լու Մեֆանիֆ Էն Թրէքսրա պակ 2,000,000 տրարով իրենց վճարումները դադարեցուցեր են :

Լիբրոն 31 Յունուար. — Յունուար 28ի եւ 29ի գիշերուան ցոյցը կազմակերպող խորհրդարանը անբարակաշունչեան ք զենկերը գրաւուցան :

Ուաշինկթըն 31 Յունուար. — Պ. Ռուզվելլը յասուկ պատկանալի մը դիմեց ծերակոյտին, որուն մէջ կը խոսի ղեկերութեանց եւ քրքրներու մասին, ու ազդող վերջաբանով մը անոր խիստ օրէններ կը պահանջէ որ տրուին ասոնց դէմ :

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՍՏՏՎԱԼԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմիջեւ լաժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատուներ :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատներին :

Պարսկական ամենաընտիր թէմպէրի այլ և այլ տեսակները բայի մեր վաճառատուներէն, ուրիշ տեղերէ դնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատուներ վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմիջեւ է, որուն անմիջեւ սպառողներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պապաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիւթօլ Օթէլի ճիշտ գիւմայ Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐՆԵՐՆ ԵՆ և ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :


400 և աւելի վիսյակիս եւ մեքանիզմով վարձատրուած, Երաշխատուած մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ
ԿԱՅՆԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳՍԻՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՍՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Ք. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ,
ուշադրութիւն դարձնել
իւրաքանչիւր մեքենայի
վրայ ՍԻՆԿԷՐԻ յանգանշիմ



Գին ՉԱՓԱԻՐ

Չրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամէն կարգի Մեքենայից

ՏՕՔՔ ԵՍՓԷՐ Լ. ՃԷՔՕՊԵԱՆ

ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ, ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վերահատ՝ ենթակային առանց յաւ պատճառելու :

Մանկաբարձուհի և մասնագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և արտոգրտեան արտերու, իսկ մանուկներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու :

Կատարեալ խնամքով և գիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիւանդացի կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները :

Հիւանդ կ'ընդունի անկէ օր առաւօտեան ժամը 9-11 և կ'ու օրէ յետոյ 2-5

Ամէն երեքօրրի ազրաաց ձրբի դարձանում :

ԾԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ

ԺՈՂՈՎՈՆԵՐԻՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »

Ժողովուրդին Մատենագրանի գրքոյիներուն հեղինակն է Տ. Ա. Պալեան, եզրպատահաց քաջ ծանօթ իր հրատարակութիւններով և յօդուածներով, Թրիւնիկն պատկեր մ'է Ուրփայի կոտորածին, և Հիւլիկն եզրպատագրթ հայութեան առաջին օրերուն մի մասնակարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով, Գիւլիկն « Արշալոյս » ի խորագրութեան կամ ուղղակի հեղինակին, հետեւեալ հասցէով :

A. BALIAN

(Egypte) Le Gaire

Մ Ի Ղ Ր Ա Ն Ս Ա Գ Ա Ն Ա Ն

Spécialiste pour les cheveux
ՇԱՐԱ ԱՊՏ ԷԼ ԱՋԻՉ ԹԻՒ 5 .



Մինչև հիմայ եղած փորձերով հաստատուած է որ փայլալ Օթիկ կամ Պիք Օթիկ և ասոնցմէ մասնաւորապէս պատրաստուած հեղուկներուն գործածութիւնը սքանչելի արդիւնք տուած է՝ թէ՛ մաղերը չի թափելու և թէ՛ հրկեցնելու համար, Միակ դարձան է այս պատրաստութիւնը՝ անիմները, ոչ ինչերն ու մաղերու արժանաներուն վրայ յայտն գրած միքրոպոնները սպաննելու :

Մինչև ցարդ ինձ գիտողներն վերջին ծայր գոն մնացած ըլլալով՝ յուսով եմ որ յետ այսու ալ զժգոյ ըլլալու պատճառ մը չ'պիտի ունենան :

Անխորդախ ու մեծ խնամով պատրաստուած Պոլսոյ ամենաընտիր մաղի ներկերուն ամէն գոյններէն ալ կարելի է գտնել իմ վաճառատունս :

Դիմեցէք, փորձեցէք և գոն պիտի մնաք :
Մ. ՍԱԳՆԱՆ

ՄԵՍ ՍՐԶԱՐԱՆ ԷԱՅԿԱԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Սայն Սրճարանը որ Միսսել կ'ընդունարի օրատուն հրապարակիլն վրայ կը գտնուի, իր մասրութեամբ և բնորոշութեամբ սեւակիլն մէջ յարմարազններէն միլն է հանգստանէ ժամանակ անցնելու :

Սրճարանը յաճախողներ վերոյիշեալ առաւելութիւններէն զատ հոն պիտի գտնուի նաեւ յարազն ընկերներ, նոր և ընկեր պիւրթաներ և անքերի սպասարկութիւն :

ՍԵՓ ՀԱԿԱՆԱՏԵՐ
ՄԻՍԱՔ ՍԱԳՆԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն

ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ

ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է Ի ՇԱՐԱ ԱՊՏ-ԷԼ - ԱՋԻՉ

ՇԷՐԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԷՉԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի սպառողական ամէն տեսակ յանձնարարութիւններ :
Նամակաւարուիս, աղբարարութիւններ, այցեքարտեր, մահազգներ, գիրքերու և պրոչիւրներու սպառողութիւններ և այլն :

Գանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէտը կանխիկ է, իսկ մնացեալ կէտը յետ սպառողութեան՝ յանձնման պահուն վճարելի է :

Գանձնարարութիւնը ամենայն ճշգրտապահութեամբ պիտի կատարուի :
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ